Արձանագրություն N 2

«ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/07» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

13 սեպտեմբերի 2021թ, ժամը 11:00,

Նոր Գեղի համայնք,

Ֆ.Թևոսյան 64, Նոր Գեղիի համայնքապետարան

Մասնակցում էին հանձնաժողովի՝
նախագահ Տ.Գրիգորյան
անդամներ՝
Ն.Համբարձումյան
Ա.Բաբախանյան
Քարտուղար՝ Կ. Հայրապետյան

1.Տեղեկություններ « ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/07 » ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

1.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են Նոր Գեղիի համայնքապետարանում, որը գտնվում է Կոտայքի մարզ, Նոր Գեղի համայնք, Ֆ. Թևոսյան 64 հասցեում, հրավերով սահմանված օրը և ժամին:

Ընդունվել է որոշում կողմ-3, դեմ-0:

2. ***«ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/07» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին***

2.1 Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

N	Մասնակցի	
	Անվանումը	Հասցեն
1	<<Էյջ-Էյ Քոնսթրաքշն>> ՍՊԸ	ք.Արտաշատ, Օգոստոսի 23/22, բն. 12
2	<<ՏՌԱՆՇ-ՇԻՆ>> ՍՊԸ	ք.Աբովյան, Գառնիի փ, 2 շ, 6 բն.
3	<<ԲԻԳՇԻՆ>> ՍՊԸ	Ք.Նոր Հաճն, Ազատամարտիկների փողոց, շենք 1/403
4	<<ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՇԻՆ>> ՍՊԸ	Ք.Եղվարդ, Երևանյան փ. 7/5

3. Տեղեկություններ հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգի մասին

3.1 Մասնակիցների հայտեր պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել է սահմանված կարգին համապատասխան:

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմանների մասին

4.1 Մասնակիցների կողմից ներկայացվել է հրավերով սահմանված փաստաթղթերը՝ հրավերի պայմաններին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ 3 կողմ, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

5.1 Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի խմելու ջրի ներքին ցանցի վնասված հատվածների վերանորոգման աշխատանքներ

Հ/Հ	Մասնակիցների անվանումը	Գնային առաջարկը (առանց ԱԱՀ)

		Արժեքը	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	<<էյջ-էյ Քոնսթրաքշն>> ՍՊԸ	4 894 370	978 870	5 873 240
2	<<ՏՌԱՆՇ-ՇԻՆ>> ՍՊԸ	5 461 709	1 092 342	6 554 051
3	<<ԲԻԳՇԻՆ>> ՍՊԸ	5 416 014	-	5 416 014
4	<<ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՇԻՆ>> ՍՊԸ	6 486 808	-	6 486 808

6. Չկայացած չափաբաժինների վերաբերյալ

Չկայացած չափաբաժիններ չեն եղել:

7. Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել

Ընդունվել է որոշում՝ 3 կողմ, դեմ՝ 0:

8. Հանձնաժողովը որոշեց՝

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները և «ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/07» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 5-րդ ենթակետի 1-ին պարբերության պահանջները, կասեցնել և վարել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ:

Բանակցությունների ընդհանուր տևողությունը սահմանվում է 15 րոպե: Եթե բանակցությունների ընդհանուր տևողության ընթացքում որևէ քայլ կատարելու պահից հաշված առաջին րոպեն լրանալը չի կատարվում նոր քայլ, ապա բանակցությունները համարվում են ավարտված:

9. Տեղեկատվություն հաջորդ նիստի օրվա և ժամի մասին

9.1«ԿՄՆԳՀ-ԳՀԱՇՁԲ-21/07» ծածկագրով ընթացակարգի գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել 2021 թվականի սեպտեմբերի 17-ին ժամը 11:00-ին Նոր Գեղիի համայնքապետարանում, որը գտնվում է Կոտայքի մարզ, գ.Նոր Գեղի, Ֆ.Թևոսյան փողոց 64 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ 3 կողմ, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ անդամներ — ***Տ.Գրիգորյան***

Ա.Բաբախանյան

Ն. Համբարձումյան

քարտուղար — ***Կ.Հայրապետյան***